

ԳԻՐԱԿՐՈՍՈՒՄԻՔԻՖԻԿԱՆ  
ԱՐՎՏԵՆԱԳԻՏՈՒՄԻՔԻՖԻԿԱՆ

ԳՐԻՉ ԵՒ ՄԱՆՐԱՎՆԿԱՐԻՉ ԹՈՒՄԱ ՄԻՆԱՍԵՆՅ

Աղթամարում գրուած և մեզ հասած 100, նաև կորսուած, բայց յայտնի 30 ձեռագրեր ժամանակին այսպէս գործող գրչութեան կենտրոնի անհերքելի վկաներն են<sup>1</sup>: Յարկապէս ԺԲ-ԺԵ. դարերում ձեռագրաստեղծման գործն Աղթամարի վանքում շարունակական մի շղթայ է, ուր գրչութեան արունստը փոխանցում էր սերնդէտերունդ, վարդապետից՝ աշակերտին. այսպէս հանդիպում ենք բազմաթիւ գեղագիր գրիչների և նրբաոճ ծաղկողների:

Աղթամարի վանքում ԺԵ. դարում գործած նշանատր գրիչ, մանրանկարիչ և մարտնագիր է Թումա Մինասենց արեղան: Նրան իրենց աշխատութիւններում անդրադարձել են Ն. Ալիսեանը<sup>2</sup>, Ն. Ծովականը<sup>3</sup>, Նր. Աճառեանը<sup>4</sup>, Ն. Յակոբեանը<sup>5</sup>, Ա. Գեորգեանը<sup>6</sup>: Տեղեկատուական առումով կարևոր է յարկապէս Ա. Գեորգեանի կազմած Մարենագիտութիւնը, ուր նշուած է Թումայի 7 ձեռագիր: Ստորև մենք փորձել ենք ամբողջացնել Թումայի ձեռագրական ժառանգութիւնը և ներկայացրել ենք 12 ձեռագիր:

Թումա Մինասենցի կենսագրութեան մասին մեզ քիչ բան է յայտնի: Առաջին անգամ նրան հանդիպում ենք 1420 թ.՝ Աւերաբան ընդօրինակելիս, վերջին անգամ՝ 1455 թ. մի յիշարակարանում, ուր նշում կայ նրա մահուան մասին: Այսու՝ գրչի գործունէութեան մեզ յայտնի թուականներն են 1420-1455 թթ.<sup>7</sup>:

Թումայի ծնողներն են Միմեոնը և Արդունը, քոյրերը՝ Ոսկերիկինը և Անդալարը: Նա երախտագիտութեամբ է յիշում իր քեռուն և ուսուցչին՝ Թումա Միայնակեցին. «...և թողութիւն մեղաց խնդրել ի Քրիստոս: ինձ, և ծնադաց իմոց՝ Միմեոնի և Արդունի... այլ և երախտատր քեռոյն իմոյ և ուսուցչին՝ Թումա Միայնակեցին»<sup>8</sup>: Այս Թումա

1 Գագիկ Ա. Արծրունի (908-943) թագաւորն Աղթամարը դարձնում է Արծրունեաց թագաւորութեան մայրաքաղաք, 912-921 թթ. նրա յանձնարարութեամբ Մանուէլ ճարտարապետը կառուցում է Ս. Խաչ եկեղեցին: ԺԲ-ԺԹ. դդ. այսպէս է գործել Աղթամարի կաթողիկոսութիւնը: Վանքը փարբեր ժամանակներում հարստացուել է նորանոր շինութիւններով: Աղթամարի գրչութեան կենտրոնի մասին և այսպէս գրուած մարտնասերի ցանկը տես՝ մեր՝ «Աղթամարի գրչութեան կենտրոնը». «Էջմիածին», 2010, Ը., էջ 118-136:

2 Ն. Ալիսեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 118:

3 Ն. Ծովական, Նայ նկարողներ. ԺԱ-ԺԳ դարեր, «Միոն», Երուսաղէմ, 1987, էջ 34:

4 Նր. Աճառեան, Նայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 334-335:

5 Ն. Յակոբեան, Վաստուրականի մանրանկարչութիւնը, հ. Ա., Երևան, 1976, էջ 103-108:

6 Ա. Գեորգեան, Նայ մանրանկարիչներ. մարենագիտութիւն. IX-XIX, Գահիրէ, 1988, էջ 242-245:

7 Քանի որ Թումայի կազմած «Տարեգրութիւնը» սկսվում է 1412 թուականին վերաբերող տեղեկութեամբ, ենթադրելի է, որ նա իր գրական, մարենագրական և գրչական գործունէութիւնն սկսել է հէնց այս ժամանակից:

8 «Նայերէն ձեռագրերի յիշարակարաններ», ԺԵ. դար, մասն Ա., կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երևան, 1955, էջ 377,

Միայնակեացը Աղթամարի Զաքարիա Բ. նահապետ (1369-1393) և Դավիթ Գ. (1393-1433) կաթողիկոսների եղբայրն է<sup>9</sup>: Թումա Մինասենցը յիշում է նաև իր հորեղբորը՝ Վարդանին և նրա որդուն՝ Մկրտիչ կրօնաւորին: Վերջինս 1425 թ. նկարագարող է Թումայի ընդօրինակած ձեռագիրը, իսկ 1428 թ. Թուման իր ձեռագրում նրան յիշել է ննջեցեալների շարքում: Ժամանակակիցների կողմից «մեծ փիլիսոփայ» կոչված Թուման նաև բանուսոյց վարդապետ է. նրա աշակերտներից է բրոջ՝ Ոսկերիկինի որդի Նայրապետ սարկաւագր (հեղապետ՝ արեղայ), որ սկզբնական շրջանում ուսուցչին օգնում էր ձեռագրերի թողթը կոկելով (1428 թ. Անգարան), ապա՝ նրա հետ միասին ընդօրինակում մարտաններ (1444 թ. Անգարան, 1455 թ. Ճաշոց)<sup>10</sup>: 1445 թ. իր Գանձարանում Թուման նշում է նաև մէկ այլ աշակերտի՝ Ներսէս սարկաւագին (հեղապետ՝ արեղայ, ապա՝ եպիսկոպոս)<sup>11</sup>: Վերջինս կոկել էր ձեռագրի թողթը. «...զՆերսէս սարկաւագն գսիրասունդ աշակերտն իմ, որ աւգնական եղև ինձ՝ կոկելով զնիւթ տրա»<sup>12</sup>: Ներապետ, արդէն եպիսկոպոս, Ներսէսն իր յիշարակարաններում խորին ակնածանքով է յիշարակել իր ուսուցիչ Թումային:

Թումա Մինասենցից մեզ յայտնի է ինն ընդօրինակութիւն, որոնց զգալի մասը նա նաև ծաղկել է, մէկ այլ ձեռագիր, որի միայն սկիզբն է Թուման ընդօրինակել, այլ գրիչների գրած ևս երկու ձեռագիր, որոնք Թուման միայն նկարագարող է:

Թումա Մինասենցից մեզ հասած առաջին մարտանը 1420 թ. ընդօրինակած Անգարանն է (ՄՄ ձեռ. 5514): Այս ձեռագրի պատրիարարուն Պապրկի վանքի<sup>13</sup> միաբան «պատրական և ընտրեալ կրօնաւոր» Վարդանն է. «Արդ, ես՝ ... սուրանուն արեղայս Թումայ, քեսի գփափագ տրա և զսէրն, գոր ունէր առ հոգևորսն, և իմով իսկ քկար անձամբս յանձն առի և ամենակարաղ զարութեամբն Աստուծոյ կարարեցի գտորք Անգարանս զայս յաստուածայնամ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչի և Սուրբ Նշանի, ի հայրապետութեան քեսան Դավթի, և ի թվարերութեան հայկազանս քոմարի ՊԿԹ. (1420)»<sup>14</sup>:

1425 թ. Թուման ընդօրինակել է հերթական ձեռագիրը՝ Անգարան, որը ծաղկել է նրա

9 Ն. Ալիսենան, Գաւագանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 110:

10 Նայրապետ գրչից մեզ յայտնի է 12 գրչագիր ևս. 1446 թ.՝ Անգարան (կորսուած է), 1459 թ.՝ երկու Անգարան (ՄՄ ձեռ. 5417, միւսը՝ կորսուած է), 1467 թ.՝ Ճաշոցի (կորսուած է), 1470 թ.՝ Անգարան (ՄՄ ձեռ. 8928), 1471 թ.՝ Մաշտոց (ՄՄ ձեռ. 4775), 1476 թ.՝ Ճաշոցի (ձեռագիրը կորսուած է), 1478 թ.՝ Անգարան (Սոր Զուղա, ձեռ. 527), 1480 թ.՝ Մաշտոց (ՄՄ ձեռ. 5581), 1484 թ.՝ Անգարան (կորսուած է), 1490 թ.՝ Անգարան (ՄՄ ձեռ. 7585): Նայրապետ արեղայի ձեռագրերի մեծ մասը ծաղկել է նրա եղբորդին՝ Կարապետ քահանան (1470, 1471, 1478, 1490 թթ. գրուածները): 1492 թ. Կարապետ քահանայի հետ ընդօրինակել է մի Մաշտոց (ՄՄ ձեռ. 4201): Տէն մեր՝ «Աղթամարի գրչութեան կենտրոնը», էջ 123-124:

11 Ներսէսի եղբայրը Սարգիստոս կրօնաւորն է, որը հեղապետում դառնում է Աղթամարի Կաթողիկոս (1465-1489): 1449 թ. Ներսէս գրիչն ընդօրինակել է մի Անգարան (կորսուած է), 1457 թ.՝ ևս երկու Անգարան (կորսուած): 1458 թ.՝ Անգարան (ՄՄ ձեռ. 3848), 1460 թ.՝ Անգարան (ՄՄ ձեռ. 5544), 1461 թ.՝ Անգարան (կորսուած է), 1470 թ. նա արդէն եպիսկոպոս էր և ընդօրինակել է Մաշտոց, որը ծաղկել է Կարապետ քահանան (ՄՄ ձեռ. 5702): 1475 թ. Ներսէս գրիչը, արդէն արքեպիսկոպոս, ընդօրինակել է Անգարան, որի յիշարակարանում նշել է իր ծնողներին, նաև եղբորը՝ Սարգիստոսին, որ արդէն Աղթամարի Կաթողիկոսն էր (Սոր Զուղայի ձեռ. 409): 1489 թ. Ներսէսն ընդօրինակել է Յայսմաուրբ (ՄՄ ձեռ. 4728): Տէն մեր՝ «Աղթամարի գրչութեան կենտրոնը», էջ 124-125:

12 Յիշ. ԺԵ. Ա., էջ 584:

13 Պապրկի վանքը կամ Չարահան Ս. Նշանը գտնուում է Վասպուրականի Ռշտունիք գաւառի Գաւազ գաւառակում:

14 Յիշ. ԺԵ. Ա., էջ 238-9:

հորեղբորորդին՝ Մկրտիչ կրօնաւորը (ՄՄ ձեռ. 5542): Ձեռագրի սրացողը Նաթունն է, որ իր ամուսնու՝ Առաքելի մահուանից յետոյ պատուիրել է այս ձեռագիրը<sup>15</sup>:

Թումա Մինասենցը 1428 թ. գրել է մանրանկարել է մի Աւերարան եւս, որի թուղթը կոկել է նրա քեռորդի Նայրապետ սարկաւազը (ՄՄ ձեռ. 6324): Այս ձեռագրի պատուիրապտուն կրկին Պարբկի վանքից է՝ Արրահամ կրօնաւորը: 1420 թ. գրուած Աւերարանի պէս այն եւս ընծայել է Պարբկի վանքին՝ Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Գեորգ եկեղեցիներին<sup>16</sup>:

1441 թ. Թուման ծաղկել է Աղթամարի վանքում Դանիել քահանայի<sup>17</sup> ընդօրինակած Աւերարանը (ՄՄ ձեռ. 5515): Այս ձեռագրի պատուիրապտուն Մկրտիչն է, որ այն սրանալուն պէս ընծայել է Աղթամարի Սուրբ Խաչին՝ «յիշարակ անջնջելի եւ կրակ անդառնալի ինձ՝ Մկրտչիս, եւ ծնօղաց եւ եղբարց իմոց, եւ ամենայն արեան մերձաւորաց եւ երախտաւորաց...»<sup>18</sup>:

1442 թ. Աղթամարի վանքի գրիչներից Թումա կրօնաւորն ընդօրինակել է մի Յայսմաւորք եւ յիշարակարանում նշել, որ սկիզբը գրել է Թումա Մինասենցը. «Այլ եւ զմեծ փիլիսոփայն զՄինասենց Թումայն, որ զառաջն նա գրեաց...»<sup>19</sup>:

1444 թ. Թուման արդէն իսկ վերը յիշուած իր աշակերտ Նայրապետ արեղայի հետ միասին ընդօրինակել է մի Աւերարան, ապա՝ ինքը ծաղկել եւ կազմել է այն. Ի դէպ, նկարել է նաեւ սրացողներին՝ եղբայրներ Ծերուն արեղային եւ Թումային (ՄՄ ձեռ. 4829), ձեռագրի թուղթը կոկողը Նասրադին սարկաւազն է: Ծերուն արեղան եւ Թումա վաճառականը՝ Ղուզիկ մականունով, Գաւաշ քաղաքից են. իրենց սրացած այս ձեռագիրն ընծայել են Գաւաշի Սուրբ Ամենափրկիչ եւ Սուրբ Կիրակոս եկեղեցիներին<sup>20</sup>:

1445 թ. նա գրել, նկարագարդել եւ կազմել է մի Գանձարան (ՄՄ ձեռ. 5521), որի թուղթը կոկել է իր միւս աշակերտը՝ Ներսէս սարկաւազը: Այս ձեռագիրը գրիչը նուիրել է Աղթամարի վանքին՝ «որ է դուռ երկնից եւ ճանապարհ արքայութեան, որպէս զի ուրախացին սովա հանապազ մանկունք եւ սպասաւորք Սուրբ Խաչ փաճարիս»<sup>21</sup>:

Այս նոյն թուականին Կապուր Կողան բերդի մոտ գրնվող Ս. Յակոբ վանքի համար Թուման գրել է մի Մաշտոց, որ այժմ կորսուած է<sup>22</sup>:

1447 թ. Մովսէս Ուրանցու խնդրանքով գրել, նկարագարդել եւ կազմել է մի Աւերարան (ՄՄ ձեռ. 4436), յիշարակարանում նշելով, որ ինքը ծերացած եւ փկարացած էր, սակայն, չցանկանալով մերժել ձեռագրի պատուիրապտու Մովսէս քահանային, ընդօրինակել է մարեանը. «Եւ արդ, ես՝ ...Մինասենց Թումայս, անուամբ եւեթ արեղայ՝ եղկելի ոգիս, փնսի

15 Տե՛ս անդ, էջ 326-7:

16 Տե՛ս անդ., էջ 374-8:

17 Դանիել քահանայից մեզ յայտնի են հետեւեալ ձեռագրերը. 1403 թ.՝ Աւերարան, որ նա գրել է իր հօր՝ Կարապետ քահանայի հետ, ծաղկող՝ Զաքարիա, կազմող՝ Մկրտիչ եպիսկոպոս (ՄՄ ձեռ. 4923): 1404 թ.՝ Մաշտոց (ՄՄ ձեռ. 4787), 1409 թ.՝ Ճառնկարի (ՄՄ ձեռ. 994), 1412 թ.՝ Ճաշոց (ՄՄ ձեռ. 9093): 1436 թ. Դանիել քահանան գրել, ծաղկել եւ կազմել է մի Աւերարան (ՄՄ ձեռ. 5543), 1444 թ.՝ մի Ճաշոց (կորսուած է): Տե՛ս մեր՝ «Աղթամարի գրչութեան կենտրոնը», էջ 120-121:

18 Յիշ. ԺԵ. Ա., էջ 524-525:

19 **Ղ. Փիրղալեմեան**, Նօփարք հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 128, հ<sup>տ</sup> 137 (այսուհետեւ՝ Նօփարք). այս ձեռագիրը կորսուած է. չպահպանուած ձեռագրերի մասին փնս ստորեւ՝ ձեռագրերի ցանկում:

20 Յիշ. ԺԵ. Ա., էջ 562-6:

21 Անդ., էջ 582-4:

22 Նօփարք, էջ 136-9, հ<sup>տ</sup> 149. ձեռագրում գրուած է եղել սրացող վանքի նորոգման պատմութիւնը:

զփափագ և զսէր Մովսէս քահանային, զոր ունէր առ հոգևորսն, և ինով ծերացեալ անձամբս ևս տկարացեալ մարմնովս յանձն առի զքծագրել զսա ինով իսկ մեղսամած մաքամբս, և ամենակարող զարութեամբն Աստուծոյ կարարեցի զաստուածախօս կրպակս զայս յաստուածապահ կրղզիս Աղթամար, ընդ հովանեալ գերահռչակ և երկնանման Սուրբ Խաչ քաճարիս, և Սուրբ Փրկչիս, և Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Սարգիս Զարավարիս, ի հայրապետութեան տեսն Ջաքարիայի...»<sup>23</sup>:

1450 թ. Թումա Մինասենցը ծաղկել է Յիպնայ վանքում Յովհաննէս կրօնաւորի ընդօրինակած Աւարարանը (ՄՄ ձեռ. 5535), լրացրել ցանկերը և կազմել, խորաններից մէկի անկիւնում (12բ) թողնելով իր անունը. «Զմեղուցեալ զժող ցանկիս և կազմող սուրբ Աւարարանիս՝ զՄինասենց Թումայս յիշեցէ՛ք ի Քրիստոս...»<sup>24</sup>:

1452 թ. գրիչն ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգութեան» աղօթագիրքը (կորսուած է)<sup>25</sup>:

1455 թ. Սրեփաննոս և Արքաիւմ կրօնաւորների պատուէրով նա սկսել է մի ճաշոցի ընդօրինակումը (ՄՄ ձեռ. 9216), սակայն ձեռագիրը չաւարտած վախճանուել է. նրա քեռորդի և աշակերտ Նայրապետ արեղան ձեռագիրը շարունակել է և առ այդ գրել. «...զընտրեալ փիլիսոփայն զՄինասենց Թումայն՝ զբեռին իմ, որ զգիրքս զայս ի Ծննդէնէն մինչ ի Ծառգարդարն նա է զժագրեալ և յայսմ ամի դառն կրկնականաւք մարմնոյն փոխեցաւ առ Քրիստոս: Վասն որոյ յերես անգեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր՝ բոլոր սրբի ու ուղիղ մտօք Աստուած ողորմի ասացէ՛ք Մինասենց Թումին...»<sup>26</sup>:

Թումա արեղան ինչպէս գրչութեան արուեստի, նոյնպէս և մանրանկարչութեան հիանալի գիտակ է: Թէ՛ ոճի, թէ՛ պատկերագրութեան, թէ՛ գոյների առումով Թուման հիմնականում չի շեղուել Աղթամարի վարպետների ընդունած և առհասարակ Վասպուրականի մանրանկարչութեանը բնորոշ ձևերից: Տերունական նկարները, որպէս կանոն, զբաղեցնում են ձեռագրերի առաջին թերթերը: Ոճին բնորոշ է ժողովրդական արուեստին յարուկ պարզութիւնը և անմիջականութիւնը: Կարևորագոյն արտահայտչամիջոցը գիծն է, որ կենդանութիւն է առնում վառ գոյների համադրութիւնից: Նիւնական գոյներն են՝ դեղինը, կապոյտը, կանաչը և կարմիրն իր երանգներով՝ վառ կարմիր և որդան կարմիր: Սրանց յաճախ նրբօրէն միահիւսված են շագանակագոյնը, նարնջագոյնը, մոխրագոյնը, սևը: Թեմաների ներկայացումն ունի պարզ պարմողական բնոյթ, որով, սակայն, ընթերցողին է փոխանցում Աւարարանական դրուագն իր իմաստային ողջ խորութեամբ: Ընդ որում, Թումայի ծաղկած քարերը ձեռագրերում միեւնոյն տերունական պատկերը երբեք նոյնութեամբ չի արուած: Օրինակ՝ 1428 թ. Աւարարանի (ձեռ. 6324) Աւարման դրուագում պատկերուած են Գարբիէլ հրեշտակապետը և նրա առաջ կանգնած Տիրամայրը: Իսկ 1444 թ. Աւարարանում (ձեռ. 4829) Տիրամայրը պատկերուած է նստած, իլիկը ձեռքին: Մանրանկարչութեան վարպետը մեծ հմտութեամբ է զժագրել նաև լուսանցազարդերն ու զարդագրերը. սրանք մեծ մասամբ որդան կարմիրով են, երբեմն կապոյտի կամ այլ երանգի հետ: Թումայի մանրանկարչական

23 Յիշ. ԺԵ. Ա., էջ 608-9:

24 Անդ., էջ 644-5: Յիպնայ Ս. Սրեփաննոս վանքը գտնուում է Տուրուբերան աշխարհի Բզնունիք գաւառում:

25 Նօվարք, էջ 170, ՏՊ՝ 189:

26 Նայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԵ. դար, մասն Բ., կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երևան, 1958, էջ 57-8:

արունսպի մասին Ն. Յակոբեանը գրել է. «Բացառությամբ «Աւերում», «Պատարագի մատուցում», «Ուրնուայ», «Դժոխքի աներումը» և «Ս. Նոգու գալուստը» նկարների, որոնք պատկերագրական նոր ձև են ներկայացնում, միս բոլոր սխեմաները, գրեթե նոյնությամբ, վերցված են Աղթամարի նախորդ նկարիչների ստեղծագործություններից»<sup>27</sup>: «Վերջին ընթրիք» պատկերի փոխարեն Քրիստոս պատարագ է մատուցում աշակերտներին: «Դժոխքի աներումը» թեմայում պատկերում է խաար ու սև դժոխքը, ուր իջել է Տերը, ծանր խաչափայտը ձեռքին: Նրա մի կողմում նախաստեղծներն են՝ Աղամը, Եսան, Արելը, միս կողմում՝ Դաիթ և Սողոմոն թագաւորները, Յովհաննես Մկրտիչը: Աղթամարում իրենց յորինումը պային դասաւորութիւններով առանձնայատուկ այս պատկերները, այնուհանդերձ, բազմիցս պատկերում են այլ կենտրոնների վարպետների գործերում:

Գրիչ և մանրանկարիչ Թուման նաև պատմագիր է: Նա գրել է «Տարեգրութիւն», որը ցաւօք, չի պահպանուել. Ղ. Փիրղալեանի շնորհիւ այս աշխատութիւնից հասել են միայն նշխարներ<sup>28</sup>:

Այսպիսով, «մեծ փիլիսոփա» պատուանունը կրող գրիչ, մանրանկարիչ, գրչության ուսուցիչ և մարտնագիր Թուման Մինասեանց արեղան Աղթամարի վանքի այն գործիչներից է, ովքեր ծանրակշիռ աւանդ են թողել հայ գրչության և մանրանկարչության արունսպի մէջ:

#### ԹՈՒՄԱ ՄԻՆԱՍԵՆՅԻ ՄԵԶ ՅԱՅՏՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ<sup>29</sup>

1. Ձեռ. 5514, Աւետարան, 1420 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թուման Մինասեանց, ստացող՝ Վարդան արեղայ, (թուղթ, 302 թերթ, 28.5x17): Մանրանկարչութիւն - Մարկոս՝ 89բ, Ղուկաս՝ 143բ, խորան՝ 1բ, 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, կիսախորան՝ 90ա, 144ա, 231ա, լուսանցազարդեր (բուսական, կենդանական, յուշկազարդիկ, տաճար), զարդագրեր (թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր), գոյները՝ կարմիր, կանաչ կապոյտ, դեղին, մանուշակագոյն, մոխրագոյն, շագանակագոյն:

2. Ձեռ. 5542, Աւետարան, 1425 թ., գրիչ՝ Թուման Մինասեանց, ծաղկող՝ Մկրտիչ կրօնաւոր, ստացող՝ Խաթուն, (թուղթ, 243 թերթ, 27.5x18): Մանրանկարչութիւն - Մարկոս՝

27 Ն. Յակոբեան, Վասպուրականի մանրանկարչութիւնը, հ. Ա., Երևան, 1976, էջ 105: Խօսքը 1428 թ. ընդօրինակուած Աւերարանի մասին է (ՄՄ ձեռ. 6324):

28 Նօսրաբ, էջ 41, 57, 71, 74, 77, 87, 95, 104, 118, 122: Պատմական փոռալները վերաբերում են 1412-1441 թուականներին: Պատմում է 1412 թ. Կապուր Կողան բերդի Սուրբ Յակոբ եղեցու վերաշինութեան մասին, 1419 թ. Վան քաղաքին հասած մորեխի մեծ պարուհար, 1422-1425 թթ. Ղարա-Յուսուֆ ամիրայի որդի Սքանդարի անրածութիւնները Վանում և շրջակայքում, 1425 թ. Վանի, 1427 թ. Մակուայ բերդերի գրաւումը, 1431 թ.՝ Փիրբէկի կողմից Աղթամար կղզու գրաւումն ու նեղութիւնները, 1439 թ. Լուսաւորչի Սուրբ Աջը Սիսից Էջմիածին փրկափոխելը, վրացիների կողմից հայերի Գողգոթայի փարածքի իրացումը, նոյն թուականին Մըմրուպ լեռան հրաբխի ժայթքումը, 1441 թ. կաթողիկոսական Աթոռի Էջմիածին փրկափոխումն ու նոր Կաթողիկոսի ընտրութիւնը:

29 Նմար. Ա. Գլորգեան, Հայ մանրանկարիչներ. մարտնագիտութիւն. IX-XIX, էջ 242-5. այս գրքում զկան ՄՄ 5542 և 9216 ձեռագրերի նկարագրութիւնները: «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մարտնագիտութիւն», հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթարեան, Երևան, 1965, հ. Բ, կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթարեան, Երևան, 1970: Մեր թուարկման չպահպանուած երեք միտրների համարներն աստղանիշով են:

56բ, Ղուկաս՝ 100բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 181բ, կիսախորան՝ 57ա, 101ա, 182ա, լուսանցազարդեր (կենդանական, բուսական, յուշկապարիկ, հրեշտակ, տաճար, կոյր՝ 84ա, 159բ, հարիւրապետ՝ 98բ, 176բ, հովիվ՝ 106բ, 211ա), զարդազրեր (թռչնազիր, հանգուցազիր, կենդանազիր), գոյները՝ կարմիր, կանաչ, դեղին, սեւ, շագանակագոյն:

3. Ձեռ. 6324, Աւետարան, 1428 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թումայ Մինասենց, ստացող՝ Աբրահամ կրօնաւոր (թուղթ, 308 թերթ, 27.5x18.5): Մանրանկարչութիւն - Աւետումն՝ 1բ, Ծնունդ՝ 2ա, Ընծայումն ի տաճար՝ 2բ, Մկրտութիւն՝ 3ա, Պայծառակերպութիւն՝ 3բ, Հարսանքի ի Կանայ՝ 4ա, Թերահաւատութիւն Պետրոսի՝ 4ա, Բուժումն անդամալոյծի եւ դիւհարի՝ 4բ, Հացի բազմացում՝ 5ա, Բուժումն կոյրի եւ որդւոյն պրւոյ՝ 5բ, Յարութիւն Ղազարոն՝ 6ա, Մուտք յերուսաղէմ՝ 6բ, Պատարագի մատուցում՝ 7ա, Ոտնլուայ՝ 7բ, Աւերումն դոկիոց՝ 8ա, Յարութիւն՝ 8բ, Համբարձումն՝ 9ա, Հոգեգալուստ՝ 9բ, Մատթէոս՝ 16բ, Մարկոս՝ 90բ, Ղուկաս՝ 144բ, Յովհաննէս՝ 229բ, խորան՝ 10բ-14ա, կիսախորան՝ 17ա, 91ա, 145ա, 230ա, լուսանցազարդեր (բուսական, թռչնային, տաճար, սրբապատկեր), զարդազրեր (մարդազիր, թռչնազիր, կենդանազիր, հանգուցազիր), գոյները՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, սեւ:

4. Ձեռ. 5515, Աւետարան, 1441 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, ծաղկող՝ Թումայ Մինասենց, ստացող՝ Մկրտիչ տանուտէր, (թուղթ, 283 թերթ, 27.5x18): Մանրանկարչութիւն - Մատթէոս՝ 5բ, Մարկոս՝ 84բ, Ղուկաս՝ 219բ, խորան՝ 1ա-5ա, կիսախորան՝ 6ա, 85ա, 136ա, 220ա, լուսանցազարդեր (բուսական, յուշկապարիկ, թռչնային, պատկեր), զարդազրեր (մարդազիր, թռչնազիր, կենդանազիր, հանգուցազիր), գոյները՝ կարմիր, կանաչ, դեղին, կապոյտ:

5.\* Յայսմաւուրք, 1442 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, ծաղկող՝ Թումայ Մինասենց<sup>30</sup>:

6. Ձեռ. 4829, Աւետարան, 1444 թ., գրիչք՝ Հայրապետ աբեղայ, Թումայ Մինասենց, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց (գրիչը), ստացողք՝ Թումայ Գաւաշեցի, Ծերուն աբեղայ (եղբարք), (թուղթ, 304 թերթ, 27.5x17.5): Մանրանկարչութիւն - Հարսանքի ի Կանայ՝ 1ա, Թերահաւատութիւն Պետրոսի՝ 1ա, Բուժումն անդամալոյծի եւ դիւհարի՝ 1բ, Զոհաբերումն Իսահակայ՝ 2ա, Աւետումն՝ 2ա, Ծնունդ՝ 2բ, Խաչելութիւն՝ 3ա, Յարութիւն՝ 3բ, Համբարձումն՝ 4ա, Զորեքկերպեան աթոռ՝ 4բ, Հոգեգալուստ՝ 4բ, Մատթէոս՝ 11բ, Մարկոս՝ 88բ, Ղուկաս՝ 140բ, Յովհաննէս՝ 229բ, Թումայ եւ Ծերուն (ստացողք)՝ 11ա, խորան՝ 5բ-10ա, կիսախորան՝ 12ա, 89ա, 141ա, 230ա, լուսանցազարդեր (բուսական, թռչնային, տաճար, սրբապատկեր, սափոր), զարդազրեր (մարդազիր, թռչնազիր, կենդանազիր, հանգուցազիր), գոյները՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, շագանակագոյն, նարնջագոյն, սեւ:

7. Ձեռ. 5521, Գանձարան, 1445 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թումայ Մինասենց, ստացող՝ գրիչը, (թուղթ, 436 թերթ, 27.5x18): Մանրանկարչութիւն - Կիսախորան՝ 1ա, 193բ, լուսանցազարդեր (բուսական, յուշկապարիկ, թռչնային, տաճար), զարդազրեր (թռչնազիր, հանգուցազիր), գոյները՝ կարմիր:

8.\* Մաշտոց, 1445 թ., գրիչ՝ Թումայ Մինասենց, ստացող՝ Յովհաննէս կրօնաւոր<sup>31</sup>:

9. Ձեռ. 4436, Աւետարան, 1447 թ., գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց,

30 Նօրաքք, էջ 128, ՏՊ 137:

31 Տնն անդ, էջ 136-9, ՏՊ 149

ստացող՝ Մովսէս Ուրանցի, (Թուղթ, 141 Թերթ, 27x18): Մանրանկարչուծիւն - Կիսախորան՝ 79ա, լուսանցազարդեր (բուսական, թռչնային, տաճար), զարդազրեր (թռչնագիր, հանգուցազր), գոյները՝ կարմիր, կապոյտ, դեղին:

10. Ձեռ. 5355, Աւետարան, Յիպնայ վանք, 1450 թ., գրիչ՝ Յովհաննէս կրօնաւոր, ծաղկող՝ Թումայ Մինասենց, ստացող՝ Կարապետ միայնակեաց, (Թուղթ, 277 Թերթ, 21.5x17.5): Մանրանկարչուծիւն - Աւետումն՝ 1բ, Ընծայումն ի տաճար՝ 2բ, Մկրտուծիւն՝ 3ա, Պայծառակերպուծիւն՝ 3բ, Յարուծիւն Ղազարու՝ 4ա, Մուտք յԵրուսաղէմ՝ 4բ, Ոտնլուայ՝ 5ա, Խաչելուծիւն՝ 5բ, Թաղումն՝ 6ա, Աւերումն դժոխոց՝ 6բ, Յարուծիւն՝ 7ա, Համբարձումն՝ 7բ, Մատթէոս՝ 14բ, Մարկոս՝ 89բ, Ղուկաս՝ 137բ, Յովհաննէս՝ 217բ, Խորան՝ 8ա-12բ, կիսախորան՝ 15ա, 90ա, 138ա, 218ա, լուսանցազարդեր (բուսական, թռչնային, տաճար, յուշկապարիկ, զարդազրեր (մարդագիր, թռչնագիր, կենդանագիր, հանգուցազր), գոյները՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, մանուշակագոյն, շագանակագոյն, սպիտակ, սեւ:

11.\* Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1452 թ., գրիչ՝ Թումայ Մինասենց<sup>32</sup>:

12. Ձեռ. 9216, Ճաշոց, 1455 թ., գրիչ՝ Թումայ Մինասենց, Հայրապետ աբեղայ, ստացողը՝ Ստեփաննոս եւ Աբրահամ կրօնաւորք, (Թուղթ, 12 Թերթ, 30.7x21.8): Մանրանկարչուծիւն - լուսանցազարդեր:

ԼՈՒՄԻՆԷ ԹՈՒՄԱՆԵԱՆ

<sup>32</sup> Տե՛ս անդ, էջ 170, ՏՊ՝ 189: